

---

## ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻՆ ՈՐՊԵՍ ՏՊԱԳՐԻՉ

### ՄԽԻԹԱՐՅԱՆ Ս. Մ.

Հայ գրատպության և մշակույթի պատմության մեջ Ոսկան Երևանցին (Ղլիճենցը) անջնջելի հետք թողած մեծություններից է: Նա տպագրիչ է, լեզվաբան (օտար լեզուների գիտակ), Հայ առաքելական եկեղեցու վարդապետ և արքեպիսկոպոս<sup>1</sup>: Ծնվել է Նոր Ջուղայում (Սպահան) 1614 թ. հունվարին<sup>2</sup>: Շահ Արասի տեղահանության գոհերից էին նրա ծնողները՝ հայր Թորոսը և մայր Գոհարազիզը, որոնք, ամուսնանալով Նոր Ջուղայում, ունեցան չորս երեխա<sup>3</sup>: Սկզբում սովորել է ծխական քահանայի մոտ, այնուհետև Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում, որն իրավամբ համարվում էր հայկական համալսարան: Դրա հիմնադիրն էր Խաչատուր Կեսարացի վարդապետը՝ հայ տպագրության նշանավոր դեմքերից ևս մեկը<sup>4</sup>:

Եվ գաղտնիք չէ, որ Ոսկանը Խաչատուր Կեսարացու լավագույն սաներից մեկն էր գրեթե բոլոր առումներով: Երբ Կեսարացին 1628 թ. վերադառնում է Լվովից, ուր մեկնել էր կարգավորելու Նիկոլ Թորոսովիչի անօրինական գործերը<sup>5</sup>, Երևանում իր կրթական լայն գործունեությունն էր սկսել Մելքիսեթ վարդապետը (Լիմ կղզուց): Այդ ժամանակ նա կանչվել էր Էջմիածին, իսկ Ոսկանը պիտի մնար Երևանում՝ ծառայելու Խաչատուր վարդապետին: Սակայն Միմոն Ջուղայեցին և Ոսկանը՝ Խաչատուրի աշակերտները, քիչ ուշ վերադառնում են Նոր Ջուղա՝ շարունակելու իրենց ուսումը: Մովսես կաթողիկոսի օրոք Ոսկանը կրկին կանչվում է Էջմիածին ու այստեղ մնում 1629-33 թթ.: Էջմիածնում էր նաև Պողոս Միդերնացին կամ Պիրոմալին, որը դոմինիկյան

---

<sup>1</sup> Տե՛ս Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Ե., 1977, էջ 439: Նաև՝ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 8, Ե., 1982, էջ 623: Նաև՝ Բաբայան Ֆ., Դիտարկումներ Ս. Մարգարի և նրա սրբավայրի մասին, Հայոց սրբերը և սրբավայրերը (հոդվ. ժող.), Ե., 2001, էջ 256: Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, Հ. Դ, Ե., 1949, էջ 188-189:

<sup>2</sup> Տե՛ս Միրզոյան Հր., Ոսկան Երևանցու դասերը (Գրական թերթ, 5.IX.2014):

<sup>3</sup> Լեռ, Երկ. ժող., հ. 5, Ե., 1986, էջ 216: Նաև՝ Ոսկանյան Ն., Կորկոտյան Բ., Մավայան Ա., Հայ գիրքը 1512-1800 թթ., Ե., 1988, էջ 50 բ, 61 ա. Ոսկանի եղբայրներն էին՝ Ավետիսը, որ առևտրական լինելով՝ ակամա դարձավ տպագրիչ, Հովհաննեսը, և քույրը՝ Հռիփսիմեն (վերջին երկուսը՝ վաղամեռիկ):

<sup>4</sup> Տե՛ս Մխիթարյան Ս., Նոր Ջուղայի տպարանը, Հայկական տպագրությունը դարերի միջով, Ե., 2014, էջ 47-50:

<sup>5</sup> Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ե., 1990, էջ 293-303, 305-310: Նաև՝ Չամչեան Մ., Հայոց պատմություն, հ. 3, Ե., 1984, էջ 630-643:

կաթոլիկ միաբանության քարոզիչ էր: Պիրումալին (նաև՝ Փիրումալի) մտերմանում է Ոսկանի հետ և նրան ուսուցանում փիլիսոփայություն, երկրաչափություն, մաթեմատիկա, աստղաբաշխություն և լատիներեն: Ոսկանը, իր հերթին, նրան ուսուցանում է հայերեն (գրաբար): Ոսկանը 1633 թ. մի կարճ ժամանակով վերադառնում է Նոր Զուղա, որից հետո նշանակվում Ուշիի Ս. Սարգիս եկեղեցու վանահայր՝ մնալով այնտեղ մինչև 1662 թվականը: Այդ ժամանակահատվածում նա հիմնովին բարեկարգում է նշանավոր սրբավայրը՝ կառուցումներ անելով ինչպես ներսում, այնպես էլ պարսպապատելով այն հուսալի շրջապարսպով: Այստեղ, ըստ ավանդության, պահպանվում էին Մեսրոպ Մաշտոցի ձեռքով բերված՝ Ս. Սարգիս գորավարի մասունքները<sup>6</sup>: Այս տարիներին հայոց կաթողիկոսները մտահոգ էին ինչպես եկեղեցական-կրթամշակութային, այնպես էլ դավանաբանական ու կրոնաքաղաքական լուրջ խնդիրներով, և այդ ամենի մեջ տպագրական գործը, մշակութային-կրթական նշանակությունից բացի, ձեռք էր բերել նաև քաղաքական նշանակություն: Միայն այն, որ Աբգար Թոխաթեցին (կամ Սաֆար Աբգարը) 1562 թ.՝ տակավին 100 տարի առաջ, Միքայել Սեբաստացի կաթողիկոսի (1567-1576) նամակով մեկնում է Հռոմ՝ պապի մոտ Հայաստանի ազատագրության խնդիրը բարձրացնելու<sup>7</sup>, կարևոր քաղաքական քայլ պետք է համարել: Այստեղ նա գրում է դավանանքի թուղթ<sup>8</sup>, ներկայացնելով նաև կաթողիկոսի նամակն իր մասին՝ իբրև Ռուբինյան տոհմի ներկայացուցիչ<sup>9</sup>: Հռոմը, խճճված լինելով ինկվիզիցիայի գործերով, չի կարողանում ինչպես հարկն է Տրդատի ժամանակից գոյություն ունեցող դաշինքը վերականգնել<sup>10</sup> ու գործնական օգնություն ցուցաբերել հայերին, բայց և փորձում է սկսած նախաձեռնությունը չկորցնել՝ դրան տալով գիտամշակութային ուղղվածություն<sup>11</sup>: Քիչ ավելի ուշ փորձում է սրել հարաբերությունները դավանաբանական հարցերում<sup>12</sup>՝ դիմելով անօրինակ հարկադրանքների:

<sup>6</sup> Գիրք որ կոչի Այամաուրք, Կ. Պոլիս, 1730 (նայել հունվարի 31-ի տակ): Նաև՝ Բաբայան Ֆ., նշվ. աշխ., էջ 256:

<sup>7</sup> Տե՛ս Անասյան Հ., Հայկական մատենագրություն, հ. Ա, Ե., 1959, էջ 18-25:

<sup>8</sup> Չամչեան Ս., Հայոց պատմություն, հ. 3, էջ 521-24:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 519-521: Այս հարցը արծարծված էր ծածկագիր նամակում, որ տրված էր Աբգարին միայն Պողոս IV պապի ներկայությամբ վերձանելու):

<sup>10</sup> Բարթիկյան Հր., «Դաշանց թուղթը», կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու ժամանակը (Պատմա-բանասիրական հանդես, 2004, թ. 2, էջ 78-93):

<sup>11</sup> Մխիթարյան Ս., Աբգար դպիր Թոխաթեցին և իր տպագրած գրքերը (Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում (հոդվ. ժող.), Ե., 2010, էջ 44-50):

<sup>12</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 220-226: Նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Ե., 1972, էջ 440-441:

Հակոբ Զուղայեցի կաթողիկոսը (1655-1680) 1656 թ. Եվրոպա է ուղարկում Մատթեոս դպիր Ծարեցուն: Վերջինս սկզբում հան-գրվանում է Վենետիկում. տարի երկու ամիս անգործությունից հետո որոշում է բախտը փորձել Հռոմում, որտեղ այդ ժամանակ համաճարակ էր, և ճանապարհները փակ էին: Բայց նա կարողանում է լինել Հռոմում: Այնտեղ վերացել էր բարեհաճությունը հայ տպագրիչների նկատմամբ, և սկսվել էին պատիժներն ու հալա-ծանքները: Կաթողիկ եկեղեցին հրահանգում էր, որ իր դավանանքի արհեստավորները հանկարծ չհամարձակվեն տպագրական արհեստը տալ հայերի ձեռքը, իսկ ով դա անի, ծածուկ կամ բացահայտ, կարժանանա խիստ պատժի<sup>13</sup>:

Ծարեցին ստիպված մեկնում է Հոլանդիա և հաստատվում Ամստերդամում: Քաղաքը մշակույթի և առևտրի խոշոր կենտրոն էր, լավ հայտնի հայ վաճառականներին: Ազատվելով կաթողիկական ազդեցությունից՝ փոքրիկ երկիրը հանդես էր գալիս իբրև բողոքական հանրապետություն: Եվրոպայում տպագրության գործում հայտնի էլզևիրների տոհմական տպարանում Ծարեցին 1658 թ. նոյեմբերին գտնում է Քրիստափոր վան Դիկին և նրա հետ պայմանագիր կնքում՝ հայերեն Աստվածաշնչի տպագրության համար 3 տեսակի տառեր ձուլելու: Վան Դիկը 1660 թ. միայն մի տեսակի տառերն էր հասցրել ձուլել՝ ուշացնելով պատվերը: Ժամանակ չկորցնելու համար Ծարեցին որոշում է տպագրել Ն. Շնորհալու «Յիսուս Որդին»: Սակայն այդ ընթացքում էլ այս խելացի ու օժտված անձնավորությունը հիվանդանում է: Իր գործը դեռ չավարտած՝ կանխազգալով մոտալուտ մահը, նա որոշում է գոնե փրկել ստեղծած տպարանը: Նա գտնում է առևտրական գործերով Ամստերդամում հայտնված Ավետիս անունով մի հայվաճառականի, որ եղբայրն էր Ոսկան վարդապետի: Նրան առաջարկում է լինել իր գործընկերը և օգուտները կիսել: Ավետիսը համաձայնում է և վճարում Ծարեցու կուտակած պարտքերն ու որոշում տպարանը ոչ թե սեփականել, այլ և՛ իր, և՛ Ծարեցու բաժինն ամբողջությամբ կտակել Ս. Էջմիածնին՝ անվանելով այն «Ս. Էջմիածնի և Ս. Մարգսի տպարան»: Բարեգործական այս արարքն արդյունքն էր նորջուղայեցի վաճառական Ավետիսի բարի կամքի: Նա վճարեց տպարանի պարտքերը, ստիպեց վան Դիկին իրեն հանձնել մյուս երկու նոր տառատեսակները: Ծարեցին վախճանվեց 1661 թվականին: Ավետիսը, լինելով կիսազրազետ մարդ, երկար տատանումներից հետո շարունակում է «Յիսուս Որդին», կցում հիշատակարան: Սկիզբը գրված է Ծարեցու ձեռքով. «Ես նուաստ ծառայ(յ) Քրիստոսի Մա(տ)թեոս դպիր Ծարեցի՝

<sup>13</sup> Տե՛ս Սմբատեան Արտ. եպ., Ս. Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1973, էջ 30:

նօտար և սպասաւոր տեառն Փիլիպպոսի՝ սրբազան կաթողիկոսի Ա. Հ. կամակցութեամբ Ս. Հոգւոյն և հրամանաւն տեառն Հայոց Յակոբ կաթողիկոսի յԲզմիրու ելեալ դիմեցի յարևմուտս»<sup>14</sup>: Այնուհետև բերում է իր կյանքի ողիսականը՝ խնդրելով ներել իրեն գործը ինչպէս հարկն է չկատարելու, ժամանակ չունենալու պատճառով: Ավետիսն էլ իր հերթին լրացնում է կիսատ հիշատակարանը և խոսում Ծարեցուց հետո իր կրած դժվարությունների մասին. «Ես Էրևանցի Ղլէջենց Ոսկան վարդապետի եղբայր Աւետիս՝ յընկեր ի նորայ դրամով... Որժամ որ մեռաւ, ես իբրև որբ մնացի Ամէսերդաւ, վասն այն, որ սրբագրող ոչ գոյր, բայց միայն ես ի կարողացող, որ չի խիստ հէմուտ... Աղաչեմ ըզձեզ, ով եղբարք, որ իմ վստահութեանն ներէք, որ ոչ եմ ես անունն իմ գրել անջինջ յիշատակարան, բայց տէրն իմ այսպէս դիպեցուց զիս այս գործոյս... որպէս (յաժմուս) ետ ի ձեռս իմ՝ անարժանիս...»<sup>15</sup>: Ավետիսը շարունակում է իր հրատարակչական գործը՝ թողնելով մնացած անելիքները: Բայց Ծարեցու մահից անմիջապէս հետո նա դիմում է Ս. Էջմիածնին՝ ուղարկել իրեն օգնականներ: Շուտափույթ Ամստերդամ է մեկնում Ոսկանի աշակերտ Կարապետ Անդրիանացին, որը սրբագրիչի պաշտոն է կատարում: Ավետիսն իր ուժերով 1661 թ. տպում է «Տետր ժամու...» (Համառոտ Ժամագիրքը)<sup>16</sup>, և Կարապետ Անդրիանացու հետ տպում են ամբողջական «Սաղմոսարան»<sup>17</sup>: 1662 թ. Կարապետն առանձին տպագրում է իր «Այբբենարանը»<sup>18</sup>: Առաջաբանում գրում է. «Տեառն Ոսկանի հռետորապետի եւ թարգմանչի սորին աշակերտէ յախմար Կարապետէ Անդրիանացոյ, որդւոյ Յօհաննիսի քահանայի, սահմանեցաւ գիրքս այս վասն վարժման մանկանց տղայոց ու կուսից աղջկանց, այլ և արանց եւ կանանց առ հասարակ»<sup>19</sup> և այլն: 1662-1663 թթ. Ավետիսն ու Կարապետը տպում են «Ժամագիրքը»<sup>20</sup>, (ծիսարան), որը կարգավորում էր հայկական եկեղեցու աղոթքները: 1664 թ. Կարապետի անունով տպագրվում է նոր «Սաղմոսարան»<sup>21</sup>: Նկատենք, որ տպագրությունները կատարված են զգուշավոր, և այդ 10 տարիների ընթացքում Սաղմոսների չորս հրատարակություններ են իրականացվում, որոնց նյութը

<sup>14</sup> Ոսկանյան Ն., Կորկոսյան Բ., Սավալյան Ա., նշվ. աշխ., էջ 36մ:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 36բ-37ա:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 38բ:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 39ա-40ա:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 40ա-բ:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 40ա:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 40բ:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 41ա-բ:

ընդհանուր քրիստոնեական բնույթ ունեւորելու և վտանգ չէր ներկայացնում դավանաբանական առումով:

Գալով Եվրոպա՝ Ոսկանը նախ լինում է Լիվոռնոյում, ուր հանդիպում է իր եղբայր Ավետիսին: Նա փորձում է տեղի հայության աջակցությունն ստանալ՝ տպագրելու Աստվածաշունչը: Սակայն իտալական այդ քաղաքում դժվար էր գտնել աջակիցների, քանի որ այդտեղի հայությունը համարվում էր կաթոլիկացած, թեև իրականում այդպես չէր. Պրոպագանդայի ազդեցությունը, սակայն, այստեղ շատ մեծ էր: Մեծագույնից Ապրո Չելեպիի դիմումը Պրոպագանդային, որ ինքը երաշխավորում է բոլոր հայերի հպատակությունը պապին, միայն թե թույլ տրվի մի հայկական եկեղեցի կառուցել, չի հաջողվում:

Ոսկանը Հռոմում մեծ հիասթափություն է առաջացնում կաթոլիկների շրջանում, որոնք մինչ այդ նրան կաթոլիկ կամ կաթոլիկամետ էին համարում՝ նկատի ունենալով իր անկեղծ բարեկամությունը Պողոս (Պառլո) Պիրոմալիի հետ: Բայց շուտով նա թողնում է Իտալիան և շտապում Ամստերդամ: 1664-1665 թթ. Ամստերդամում սկսում է «Շարականոցի» տպագրությունը<sup>22</sup>, ավարտում այն<sup>23</sup> և ձեռնարկում «Այբբենարան և քրիստոնեականի»<sup>24</sup> նորագված տարբերակի վերատպությունը 1666 թ.՝ որպես գրագիտության համար անհրաժեշտ ձեռնարկի: Նախապես նա Լիվոռնոյում գտնում է նորջուղայեցի 3 վաճառականների՝ Խանենց պ. Ստեփանոսին, Քրթեշենց պ. Թեոդորոսին և պ. Պետրոսին (Տեր-Ավագյան), որոնք համաձայնում են հոգալ գրքի ծախսերը՝ պայմանով, որ հրատարակությունից հետո մայր գումարը վերադարձվի, իսկ հետո դա նվիրում են Ս. Էջմիածնին, Ուշիի Ս. Սարգիս եկեղեցուն և Երուսաղեմին<sup>25</sup>: Սկսվում է իր Մեծ երազանքի՝ «Աստվածաշնչի» տպագրության իրականացումը (1666-68 թթ.)<sup>26</sup>: Ոսկանը լուծել էր նաև երկի խմբագրման որոշ արդիական հարցեր՝ 1) համեմատել էր հայերեն և լատիներեն Աստվածաշունչերը, 2) տնասել, գլխակարգել և համարակալել էր երկի մասերը, 3) առանձնակի նյութ էր դարձրել հատուկ անունները և նույնիսկ 4) Միրաքի գիրքը (Հին Կտակարան) կրկին թարգմանել էր տվել Ստեփանոս Լեհացուն<sup>27</sup> և այլն: Թե որքան դժվարին գործ է եղել դա, այժմ ոչ ոք պատկերաց-նել չի կարող: Առաջաբանի հեղինակային

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 41 ք-43 ք:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 42 ք:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 43 ք-44 ա:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 50 ա:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 44 ք-50 ք:

<sup>27</sup> Տե՛ս Լեո, Երկ. ժող., հ. 5, էջ 231: Նաև՝ Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Մավալյան Ա., նշվ. աշխ., էջ 47 ա-48 ք:

բացատրությունները հեռու են տալու այն ողջ հակասական և երբեմն անլուծելի թվացող հարցերի պատասխանները, որոնք ծառացել են տպագրիչի առջև, և որոնք, իբրև վարդապետ, պարտավոր էր անսայթաք ու ճշգրիտ ներկայացնել հոգևոր դասին ու հանրությանը:

Գրված Հառաջաբանը պաթետիկ լատինաբան հայերենով է, որով Ոսկանը սկսում է իր խոսքը. «Բանահիստություն առ վեհագոյն հայրապետն հայոց տէր Յակօբ ի նուաստէ ումեմնէ բանի սպասաւորէ Ոսկան վարդապետի՝ յաղագս տպագրութեան տառից աստուածայնոց: Մեծահրամանի իշխողիդ և վեհափառիդ հրամանաւ յանձին կալցուք գգործառնութիւնս, որ ոչ է մեզ ճահ ըմբոն, այլ յաւէտ յայնոցիկ որք վսեմախոհք և հոգիւնկալք են»<sup>28</sup>: Կարծես գործ ունենք XI դ. հեղինակ Գր. Մագիստրոսի վերամբարձ ոճի հետ: Ուշագրավ է հատկապէս այն մասը, որտեղ Ոսկանը դիմում է ընթերցողին. «Շնորհիւ և ողորմութեամբ ամենագորին Աստուծոյ մատեանս Աստուածաշունչ բազմաւ աշխատութեամբ կարգաւորեցաւ՝ գլխադրութեամբ և տնատու[թեամբ]ք ըստ դադմատացոցն. նաև ցանգով և համաձայնութեամբ: Քանզի համաձայնութիւն բովանդակից մատենից ըստ սրբոյ աւետարանին առ մեզ ոչ գտանին, այլ առ դադմատեցիսն միայն...»<sup>29</sup>: Աստվածաշնչի այս հրատարակությունը շատ առումներով նորություն էր, շատ իմաստներով՝ բացառիկ: Գ. Զարպիանայանը գրում է. «Այսպէս Ոսկանայ և ընդ-հանրութեան՝ ազգային փառքն կատարեցաւ պատկերազարդ Աստվածաշունչ գրոց տպագրութեամբ, որ արդարև մեծ ձեռնարկ մէր և մտածողաց ի գլուխ հասցնողաց իրենց դրամական օժանդակութեամբ, մեծ պարծանք մը»<sup>30</sup>: Այս հիբրավի հերոսական ձեռնարկումը միանշանակ ընդունելության չարժանացավ: Առանձին հատվածներ ու մասեր, որ նոր թարգմանության ու ճշգրտումների արժանացան, բնագրական առումով կարևոր էին, սակայն արտառոց էին իրենց ընդգծված լատինաբան լեզվով: Իսկ դա լատին գիտունների հետ նրա մտերմության հետ միասին հայոց մեջ ընկալվում էր իբրև նահանջ հայրենական ավանդներից, թեև դա բնավ էլ այդպէս չէր:

Ոսկանն ի մոտո ծանոթ չէր գրավաճառության գործին: Եվ դա, ըստ Լեոյի, պատշաճ ձևով չկազմակերպելու և հայության խոշոր կենտրոններից հեռու լինելու պատճառով Ամստերդամի տպարանին ու նրա եռանդուն կազմակերպչին (տիրոջը) գցեց նյութական ծանր վիճակի մեջ: Գրքերը լավ չվաճառվելու, վաճառվածներից ստանալիք դրամը ժամանակին տեղ չհասնելու հետևանքով

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 47 ա:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 48 բ:

<sup>30</sup> Զարպիանայան Գ., Պատմություն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 109:

Ոսկանը խրվեց պարտքերի մեջ և մտածում էր տպարանը հարմար ու ապահով վայր տեղափոխել<sup>31</sup>: Սկզբում որոշում է տեղափոխվել Լեհաստան, ուր մեծ հայկական գաղութը կնպաստեր դրամական խնդիրները կարգավորելուն: Սակայն տխրահռչակ Նիկոլ Թորոսովիչին նախապես դիմած լինելուց հետո փոխում է որոշումը, երբ տեղեկանում է, թե այնտեղ մեծ գործունեություն են ծավալել Ալուիսիոս Պիդուն և Կդեմես Գալանոսը: Լվովում նույնիսկ բացվել էր պապական դպրոց հայերի համար, իսկ Գալանոսը նշանակվել էր ուսուցչապետ: Վերջիններս կատաղի պայքար էին մղում էջմիածնականների դեմ: Դա վերաբերում էր նաև Ոսկանին և իր տպարանին, որտեղ, ըստ պապականների, իբր, բազում «հերետիկո-սական» գրքեր էին տպագրվում: Նախ այս, իսկ հետո նաև պարտատերերից ազատվելու համար հարկավոր էր արագ թողնել Ամստերդամը և ընտրել մի նոր վայր: Ոսկանը ստիպված ընտրում է Ֆրանսիան: Ճիշտ է, ֆրանսիական եկեղեցին ենթարկվում էր պապին, սակայն, բացի դավանաբանական հարցերից, մյուս հարցերում վարչատնտեսական մեծ անկախություն ուներ, և այդ ինքնավարությունը հայտնի է գալիականություն անունով<sup>32</sup>: Ոսկանը 1669 թ. մի աղերսագիր է հանձնում Լյուդովիկոս XIV-ին՝ թույլ տալ տպարանը տեղափոխել Մարսել: Լյուդովիկոսը տալիս է իր համաձայնությունը, սակայն կաթոլիկ այդ երկրում տպարանն ընկնում է պապական Պրոպագանդայի ազդեցության ոլորտը<sup>33</sup>: Թույլտվությունը մի պայմանով էր, որ տպագրվելիք գրքերը «հռոմեական ուղղափառ կրոնին և հավատալիքներին հակառակ բան» չպարունակեին<sup>34</sup>:

Ժամանակավորապես Ոսկանը հանգրվանում է Լիվոռնոյում, ուր և տպագրում է ինչպես Ռոբերտոս Բելարմինոսի «Վարդապետութիւն Քրիստոնէական» (Լիվոռնո, 1670)<sup>35</sup>, այնպես էլ «Պարտեզ հոգևոր» (Լիվոռնո, 1670)<sup>36</sup> և «Տարեցոյց և տօնացոյց» (Լիվոռնո, 1671)<sup>37</sup> կոչված գրքերը: Այս ընթացքում Ոսկանի տպարանն աստիճանաբար անգործության է մատնվում: Արդեն 1673 թ., վստահելով ֆրանսիական կառավարությանը, Ոսկանը վերակազմավորում է տպարանը՝ որպես գործընկեր ընդունելով նաև իր հայրենակից Թադեոս

<sup>31</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 235:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 237:

<sup>33</sup> Պրոպագանդա դելլա Ֆիդե-Հռոմի պապին կից վարչական մարմին, որ զբաղվում է հավատքի տարածման գործով. հիմնել է Գրիգոր XIV պապը (1622 թ.):

<sup>34</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 238:

<sup>35</sup> Ոսկանյան Ն., Կորկոսյան Ք., Սավալյան Ա., նշվ. աշխ., էջ 62ա-63ա:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 63ա:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 63ա-բ:

Համագասալանին: Վերջինս, սակայն, դառնում է Ոսկանի մահվան պատճառ<sup>38</sup>: Տպարանը կրկին կոչվում էր «Ս. Էջմիածին և Ս. Սարգիս» անունով: Յուրաքանչյուր սեփականատեր ներդնում է 1000 դահեկան: Տպագրությունը սրբագրում էր Ոսկանը և 350 օրինակ գրքերից վերցնում է իրեն, մնացածը կիսում են: Երբ տպարանը տեղափոխվեց Մարսել, Պրոպագանդան այն վերցրեց իր խիստ հսկողության ներքո:

Լիվոռնոյում արդեն Ոսկանը հասկանում է, որ որոշ չափով ազատվելով պարտատերերի ճնշումներից, հայտնվում էր պապական Պրոպագանդայի գաղափարական ու դավանաբանական ճնշումների տակ<sup>39</sup>: Մարսելը բաղձալի փրկություն բերել չէր կարող, քանզի Ֆրանսիան ևս կաթոլիկ երկիր էր, և այստեղ նույնպես մեծ էր Պրոպագանդայի ազդեցությունը<sup>40</sup>: Ստեղծված վիճակից դուրս գալու այլ ելք չունենալով՝ Երևանցին 1671 թ. Լիվոռնոյում ավարտում է «Տարեցոյց և տօնացոյց» Գրիգորյան տոմարի ժողովածուի տպագրությունը<sup>41</sup> և տպարանը տեղափոխում Մարսել: Այստեղ նա կարողանում է տպել ևս նոր հինգ գիրք<sup>42</sup>: Դրանց մեջ է Գր. Նարեկացու Մատյանի անավարտ օրինակը<sup>43</sup>: Հրատարակված վերջին «Սաղմոսարանի» (Գիրք աղօթից) հիշատակարանի փոխարեն դրված ծանուցումից տեղեկանում ենք, որ «Տէր Ոսկան Աստուծաբան վարդապետն և գերկրորդ թարգմանիչն, որ յսկզբան առաջին տետրն Սաղմոսիս հանգեաւ ի Քրիստոս, ի հազար հարիւր քսան եւ երեք թուին յամսեանն փետրվարի դ (այն է՝ 1674 թ. փետրվարի 4-ին), որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի»<sup>44</sup>: Դեռ շատ կարևոր ծրագրեր չիրականացրած՝ 60 տարեկանում կյանքից հեռանում է ևս մեկ տաղանդավոր հայ գործիչ:

Ոսկանյան տպարանում լույս տեսան 40-ից ավելի գրքեր, իսկ միայն Ոսկանին հաջողվեց տպագրել 28-ը<sup>45</sup>: Այս մեծաքանակ գրքերով նա գերազանցեց իր բոլոր երախտավոր նախորդներին: Եթե դրան էլ ավելացնելու լինենք դրանցից մի քանիսի առանձնակի կարևորությունը, ապա 10-12 տարիների ընթացքում կատարվածը, այն էլ նպաստավոր պայմանների բացակայությամբ, հիրավի,

<sup>38</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 238-39: Նաև՝ Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., նշվ. աշխ., էջ 75 ա: Տպագրված մի քանի հիշատակարաններում բանվոր հանդիսացող ս. հայրերը կա՛մ Ոսկանի անունն են հիշատակում, կա՛մ իրենց խմբի, բայց ոչ Թադեոսի:

<sup>39</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 236:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>41</sup> Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավալյան Ա., նշվ. աշխ., էջ 63 ա-բ:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 63բ-67բ (NN 79, 81, 82, 83, 84):

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 65ա-բ:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 67 ա:

<sup>45</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 41բ-67 բ (NN 55-74, 76-79, 81-84):

հերոսություն կարելի է անվանել: Նախ «Աստվածաշնչի» բացառիկ հրատարակությունն<sup>46</sup> ու մեծ տպաքանակը ժամանակի սուղ պայմաններում գրեթե անիրագործելի մի բան էին: Նախորդ բոլոր տպագրիչները չէին կարողացել այդ որակի «Աստվածաշունչ» տպագրել, իսկ մեկինը՝ Հովհ. Ջուղայեցունը (1650 թ.), մնացել էր անավարտ<sup>47</sup>: Գլխակարգման, տողաբաժանման, տեքստի համեմատության փորձեր տպագրիչները դեռևս չէին կատարել մինչև Ոսկանը: Շքեղ էին տիտղոսաթերթը, զանազան նկարապատկերները, զարդանախշերը, գլխագրերը, լուսանցքազարդերը: Իսկ հետո տպագրիչը կարողացավ հրատարակել կարևոր այլ երկեր ևս՝ Մ. Խորենացու «Գիրք աշխարհացը» (Աշխարհացոյցը) Վարդանի առակների հետ, Առ. Դավրիժեցու «Գիրք պատմութեանցը», Տումարի գիրքը («Տարեցոյց և տօնացոյց») իր մի քանի հրատարակություններով, Այբբենարանը, իր հեղինակած «Քերականութիւնը»<sup>48</sup>, որ մասամբ փոխադրություն էր իտալերենից, և այլն: Վերջին գրքերը աշխարհիկ բովանդակություն ունեցող երկեր էին, որոնք նաև վկայում էին Ոսկանի ազատախոհության ու լայնախոհության մասին:

Ցավալի էր եռանդուն վարդապետի ու տպագրիչի մահը, քանզի ժամանակի ամենաբեղուն հայ տպագրիչի անժամանակ վախճանով լույս աշխարհ չեկան շատ ու շատ կարևոր գրքեր: Ավելին, դեռ նրա կենդանության վերջին մի քանի տարիներին ճիզվիտներին հաջողվեց մի կողմից տպագրության գործը հնարավորինս կասեցնել՝ դրսից իրենց հարուցած արգելքներով, մյուս կողմից էլ Ոսկանի մերձավորների մեջ գտնել ու նրա դեմ օգտագործել իր իսկ հայրենակիցներին: Նրա աշակերտ Կարապետ վ. Անդրիանացու, հարազատ քրոջ որդի Սողոմոն Լևոնյանի կողքին կար և նորջուղայեցի Թադեոս Համազասպյանը, քահանա, որ տպա-րանը սեփականացնելու համար գործիք դարձավ պրոպագանդիստների ձեռքում<sup>49</sup>: Նրա առաջին տմարդությունը դրսևորվեց Լիվոռնոյում, երբ հանդիպեց հայ երեք վաճառականներին, որ ստանձնել էին Աստվածաշնչի տպագրության ծախսերը: Նրանց հետ բանակցությունների ժամանակ քահանայի սաղրանքով հովանավորներն իբր ապօրինաբար բռնագրավեցին Ոսկանի տպագիր օրինակները: Այդ առիթով նա դիմեց դատարան, և ինքը բանտարկվեց: Նա փաստորեն գիտակցաբար ձախողում էր գործը: Ոսկանը նրան ուղարկել էր Լիվոռնո վաճառականների հետ

<sup>46</sup> Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 231: Նաև՝ Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, էջ 439: Օգտագործված ձեռագիրը Հեթում Բ արքայի 1295 թ. օրինակն է:

<sup>47</sup> Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Մավալյան Ա., նշվ. աշխ., էջ 32 բ:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 44 ա:

<sup>49</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 237:

գործը վերջացնելու, բայց ոչ վեճեր հարուցելու: Ըստ Համագասպյանի՝ նրանք իբր հրաժարվում էին իրենց խոստումից: «Թե այդպես չի եղել գործը, - գրում է Լեոն, - երևում է նրանից, որ... փոխանակ վաճառականներին պատժելու՝ ինքը դատապարտվել է բանտարկության: Բանտից նա ազատվեց պապի նվիրակի միջնորդությամբ. մի հանգամանք է սա, որ ցույց է տալիս, թե Թադեոս Համագասպյանը բավականին գնահատելի մարդ էր կաթոլիկ հոգևորականների համար»<sup>50</sup>: Լեոն չի բացառում և վերջինիս դերակատարությունը տպարանը 1673 թ. Ամստերդամից Մարսել տեղափոխելու գործում, երբ սա «խորհուրդ է տվել» իր հայրենակցին այդպես վարվել: Մարսելում Պրոպագանդան անմիջապես հրահանգում է տեղի եպիսկոպոսին հսկողություն սահմանել տպագրվելիք հայերեն գրքերի վրա: Այդ գործին խառնվում է նաև հայր Պիդուն՝ Փարիզի Թեաթինյան քարոզիչը, որը «օգնել» էր Լեհաստանի հայերին 1666 թ. Հռոմի եկեղեցու «գիրկն անցնելու»: Նա էլ, ըստ երևույթին, Համագասպյանի հովանավորներից մեկն էր, հայ տպագրության թշնամին, որ պահանջում էր Լեհաստանում ոչնչացնել պրոպագանդայի հսկողությամբ չանցած բոլոր հայերեն գրքերը:

Այսպես, դավանաբանական խնդիրները քաղաքական աստատ էին ստանում, պառակտում մեր ժողովրդին ինչպես գաղութներում, այնպես էլ բուն Հայաստանում, երբ Ամենայն հայոց կաթողիկոսը և Էջմիածինը դիտարկվում էին իբրև Հռոմի գաղափարական հակառակորդ: Այսպիսի անամոթ պահվածքը շատ դեպքերում ողբերգական հետևանք էր ունենում հայերիս համար: Փոխանակ հայ ժողովրդին անհրաժեշտ օգնություն ցույց տալու՝ Հռոմն ու իր ճիզվիտական կազմակերպությունները դրսևորում էին հարձակողական պահվածք, հրահրում դավանաբանական անտեղի պառակտումներ ու դարավոր անվերջանալի վեճեր: Սակայն մի կողմ թողնելով այդ ծանրագույն դժվարություններն ու արգելքները՝ հայ տպագրիչները պատվով էին կատարում իրենց գործը: Նրանցից շատերն ուղղակի հայոց պետականության վերականգնման խնդիրներով էին հասել Եվրոպա<sup>51</sup> ու գիտակցում էին, որ հայրենիքը կործանման վտանգի մեջ է: Ուստի նրանց պայքարը Հայոց հայրապետների գլխավորությամբ ու հրահանգներով գլխավորապես կրում էր նախ քաղաքական և հետո միայն մշակութային-լուսավորական բնույթ: Մեր խորին համոզմամբ՝ այդպիսի մեծ մտածող և անկոտրում անձնավորություն էր Ոսկան վ. Երևանցին: Ճիշտ է՝ դիմադրությունն ու սաղ-

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 236-237: Նաև՝ Սմբատեան Ա. եպ., Սուրբ Էջմիածնի միաբանութեան գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, էջ 30: Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Մ. Էջմիածին, 2001, էջ 2954:

<sup>51</sup> Տե՛ս Մխիթարյան Ս., Աբգար դպիր Թոխաթեցին և իր տպագրած գրքերը, էջ 44-46:

*րանքները երբեմն անտանելի էին, սակայն պայքարի ելած հայ մտավորականները, վաճառականները, շատ անգամ և հասարակ մարդիկ չէին ընկրկում՝ քաջ գիտակցելով իրենց պարտավորության չափը գալիք սերունդների առջև:*

## ВОСКАН ЕРЕВАНЦИ КАК КНИГОПЕЧАТНИК МХИТАРЯН С. М.

### Резюме

В сфере армянского книгопечатания Воскан Ереванци занимает особое место. Родился он в Новой Джуге в 1614 г., учился у Хачатура Кесараци. В 1633-1662 гг. являлся священником церкви Св. Саргиса в Уши. Армянский католикос О. Джугаеци (1656-1680) отправил в Европу М. Тсареци, который обосновался в Амстердаме, где опубликовал поэму Н. Шнорали «Иисус сын». После его смерти типография осталась брату Воскана, Аветису. Вскоре в Европу был отправлен Воскан, который продолжил дело предшественников. В 1664-1665 гг. он приступил к изданию «Шаракноца» и других неизданных книг. Издание «Библии» им было осуществлено в 1666-1668 гг. Расходы на публикацию взяли на себя трое армян-торговцев, но Воскан Ереванци не смог расплатиться с долгами и вынужден был перебраться в Ли-ворно, а затем – в Марсель. После 1671 г. Воскану Ереванци удалось напечатать всего пять книг и в их числе «Книгу скорбных песнопений» Гр. Нарекаци. Всего им было издано 28 книг, вошедших в историю армянского книгопечатания.

## VOSKAN YEREVANTSI AS A TYPOGRAPHER

### S. MKHITARYAN

### Abstract

Voskan Yerevantsi is a well-known celebrity in the sphere of the Armenian printing. He was born in 1614 in Nor Jugha and was a student of Khachatur Kesaratsi. In 1633-1662 he was appointed abbot of Saint Sargis Church. The Armenian His Holiness, H. Jughaetsi, sent M. Tsaretsi to Europe beforehand, who decided to stay in Amsterdam. He published "Jesus Son" by N. Shnorhali and died in 1662. Voskan's brother Avetis inherited the press. Soon Voskan was sent to Europe and continued the activities of his ancestors. In 1664-1665 he started the "Hymnal of" /"Sharaknots"/ and publishing of not published compositions. The publishing of "The Bible" was fulfilled by him in 1666-1668. Three Armenian merchants covered the costs of the book, but Voskan was not able to pay his debts. Being in unfavourable conditions, he left for Livorno, and later for Marseille. After 1671 Voskan could publish only 5 books, one of which was the "Book of Lamentations" by Gr. Narekatsi. 28 books were published by Voskan Yerevantsi which are of a great importance in the history of the Armenian typography.